ներ, դանակ և քերիչներ, վերջինները, տարաբաղդաբար կիսով չափ փչացած, ուստի և նրանց ձևի մասին պարզ գաղափար չենք կազմում։ Սեղանի կողքից ձողի վերայ բարձրանում է գրակալը, բացուած օրինակով, որ յունարէնն է յիշեցնում։ Աւետարանչի առաջից՝ հեռաւոր տեսարանը ճարտարապետական չէնքի մի անկիւնն է, երկու լուսամուտներով եւ թեք կտուրի անկիւնամասով։ Նկարի ֆոնը կապոյտն է։ Շրջանակը զարդարուած է գրաֆիկ, բուսական գեղեցիկ զարդով։

ներով. երկու լիւնետի մէջտեղից կախուած է ձուաձեւ ողկոյզ, եղերուած ոսկի դծով։ Գ.ի մոտիւներն են ներքևից վերև՝ հիւսկէն, պարանահիւս օղակների մէջ անցրած՝ ձողի վերայ, չորս թևանի աստղաձևեր, գրի պոչը արմաւենիկով վերջացած։ ԻրՃ տառերի մոտիւներն են ութաձևեր և օղակներ, ոսկով, կապոյտով, կարմրով եւ սպիտակով երփնաւորած։ Լուսանցքի զարդի հիմքը մի քառակուսի է, մէջը երկրաչափական զարդերով, նրա վերայ բարձրանում է միջին մասը՝ հիւսուածքի եւ



(պատկեր 6)

Ամբողջ մանրանկարը թողնում է բարձր արուեստի տպաւորութիւն։

Սկզբնազարդը առանձին նորութիւն չէ տալիս, երկու իրար կողքի, երեքքառորդական բոլորակների մէջ գրուած է աւետարանի վերնագիրը. սկզբնազարդի մակերևոյթը զարդարուած է բուսական ոճաւորած մոտիւների մեծ և փոքր վարդեակներով. երկու լիւնետի մէջտեղից կախուած է ձուաձեւ ողկոյզ, եղերուած ոսկի դծով։ Գ.ի մոտիւներն են ներքևից վերև՝ հիւսկէն, պարանահիւս օղակների մէջ անցրած՝ ձողի վերայ, չորս թևանի աստղաձևեր, գրի պոչը արմաւենիկով վերջացած։ ԻրՃ տառերի մոտիւներն են ութաձևեր և օղակներ, ոսկով, կապոյտով, կարմրով եւ սպիտակով երփնաւորած։ Լուսանցքի զարդի հիմքը մի քառակուսի է, մէջը երկրաչափական զարդերով, նրա վերայ բարձրանում է միջին մասը՝ հիւսուածքի եւ արմաւենիկի զարդերով եւ վերջաւորւում խաչով, կիսալուսնի տակ։

Մարկոսը՝ 112 բ. (պատկեր 6) բաղմած է դարձեալ ցածրաթիկունք աթոռակի վերայ, մանրանկարի մեծութիւնը $22^1/^2 \times 14,8$ սմ, որի ոտները և նստելու տեղի կողերը զարդարուած են արմաւենիկ և այլ մոտիւներով. աւետարանիչը հագել է նաբնջագոյն, լայնաթև և մինչև ոտները հաս-